

ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 8, կիրակի.—Հոգեգալուստ. Պենտեկոստէ. Յիսներորդ օր ի Զատկէն.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում մատուցվում է ավանդական հանդիսությամբ սուրբ պատարագ, իսկ «Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

Մայր տաճարը լիքն է հավատավոր բազմությամբ:

Տաճարի Ավագ խորանի դիմաց, աստյանում, տեղ են գրավել Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի գրասենյակների վարիչները:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Ս. պատարագին և հայրապետական քարոզին ներկա են նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Օրվա ս. պատարագը մատուցում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Աղան ծայրագույն վարդապետ Բալիոզյանը, որը մի քանի օր առաջ Ս. Էջմիածին է ժամանել Սիդնեյի հայ եկեղեցու «Երիտասարդաց Մարմնի» 12 երկսեռ անդամների հետ՝ «յուխտ և յերկրպագութիւն»:

Երիտասարդները նույնպես ներկա են սուրբ պատարագին և վերջում երկյուղած բարեպաշտությամբ սուրբ Հաղորդություն են ստանում:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»: Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ խորանի բեմ՝ Իր օրհնությունն ու պատգամը տալու օրվա տոնի առթիվ և համառոտակի ներկայացնում՝ վերջերս Վիեննայի, Մյունխենի, Ֆրանկֆուրտի և Փարիզի եկեղեցիներին և համայնքներին տված Իր հովվապետական այցելության տպավորություններն ու հուշերը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(7 հունիսի 1981 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան»:

Սիրելի հավատացյալներ, այս աղոթքով Մենք ճամփա ելանք ապրիլ ամսի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից դեպի արտասահման: Համաձայն նախօրոք կազմված ծրագրի, մեկնեցինք Ավստրիա, Ֆեդերատիվ Գերմանիա և Ֆրանսիա, Մեր օրհնությունները և հայրենիքի ողջույնը բաշխելու հայ հավատացյալներին, որոնք ապ-

ռում են մեծ թվով այդ երկրներում: Մենք եղանք նախ Վիեննայում, մի երկիր, որտեղ բնակվում են ավելի քան հազար հայեր, ապա Մյունխեն և Ֆրանկֆուրտ քաղաքներում: Գերմանիայում, վերջին 20 տարիների ընթացքում Միջին Արևելքի երկրներից բազմաթիվ հայեր տեղափոխվել են այնտեղ (Թուրքիայից, Իրանից, Լիբանանից, Սիրիայից և մի քանի այլ երկրներից), և ահա նրանց թիվը հասել է ավելի քան տասը հազարի, ցրված Գերմանիո տարբեր քաղաքներում: Մենք այդ քաղաքներից միայն երկուսը այցելեցինք՝ Մյունխեն և Ֆրանկֆուրտ: Գերմանիայում հայերը եկեղեցի չունին տակավին, նոր են տեղափոխվել և հազիվ իրենց առօրյա կարիքները հոգալով են զբաղված, բայց ունեն թե՛ եկեղեցական և թե՛ մշակութային համայնքային կազմակերպություններ, որոնց շուրջ համախմբվում են հայերը՝ պահպանելու համար իրենց գոյատևումը:

Հետո անցանք Փարիզ, որ, ինչպես գիտեք, մեր հայաշատ մեծ կենտրոններից մեկն է, որտեղ բնակվում են շուրջ հարյուր հազար հայեր:

Ահավասիկ, այն ծրագիրը, որ Մենք գործադրեցինք: Այս պահին մենք կամենում ենք վկայել թե հիշյալ երկրներում ապրող հայերը, ինչպես աշխարհի մեջ ցրված բոլոր հայերը իրենց ազգային կյանքի հիմքը, նկատում են մեր վերածնված Մայր Հայաստանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Պարզ է բոլորի համար անխտիր, որ առանց հայրենի իրականության և առանց Ս. Էջմիածնի օրհնության արտասահմանի հայության կյանքը կդառնա ունայնություն և հուսահատություն:

Այս ճշմարտությունը Մենք մեկ անգամ ևս հաստատեցինք մանավանդ Գերմանիայում, որտեղ նոր համայնքներ են կազմվում: Այնտեղ շատ հուզիչ պահեր ապրեցինք հանդիպելով մանավանդ Թուրքիայից եկած հայերի, որոնցից շատ-շատերը հայերեն խոսել չեն իմանում, խոսում են թուրքերեն կամ քյուրդերեն: Սակայն բոլորը գիտակցում էին թե հայեր են: Հայությունից իրենց հիշատակ մնացել էր միայն, խաչ հանելը և «Հայր մեր»-ը արտասանելը: Նրանցից շատերը Մեր ձեռքն էին համբուրում՝ կեցցե Հայաստան գոչելով:

Ահավասիկ, սիրելի ժողովուրդ, հոգեկան պատկերը արտասահմանի հայության: Մենք պետք է աղոթենք առ Աստված, որ պահպանվի աշխարհի խաղաղությունը, որ պահպանվի մեր վերածնված հայրենիքի խաղաղ ու ապահով գոյավիճակը որ նա շարունակե մնալ այն փարոսը, որ լուսավորում է սփյուռքի համայն պանդուխտ հայությունը, Ս. Էջմիածնի օրհնությամբ:

Այս ուղևորության ընթացքին Մենք հոգեկան մխիթարություն ունեցանք նաև էկումենիկ հանդիպումների, միատեղ կրոնական արարողություններ և հանդիսություններ կազմակերպելու քույր Եկեղեցիների հետ, թե՛ Վիեննայում, թե՛ Ֆրանկֆուրտում և թե՛ Միունխենում, երբ աղոթեցինք նաև աշխարհի խաղաղության պահպանման համար: Որովհետև բոլորը գիտակցում են, թե որևէ պատերազմ կործանարար կլինի բոլորի համար անխտի՛ր: Ոչ ոք չի ազատվի ատոմային պատերազմի արհավիրքներից:

Այս գիտակցությունը զորավոր է Արևմուտքի մեջ: Մեր ուղևորությունների ընթացքին Մենք կարևոր հանդիպումներ ունեցանք նաև պետական մակարդակի վրա, հանդիպում ունեցանք Ավստրիո հանրապետության նախագահի, հետո Ավստրիո արտաքին գործոց և մշակույթի նախարարների հետ, բոլորի մոտ գտնելով շատ սիրալիր և հարգալիր վերաբերմունք: Մեզ համար կարևոր եղավ այցելել նաև Ավստրիո ակադեմիայի նախագահին, որ իբրև հանրածանոթ պատմաբան բարձր է գնահատում մեր ժողովրդի անցյալը և մշակույթը, և այս օրերին նա գտնվում է Երևանում՝ իբրև հյուրը մեր Հայաստանի ակադեմիայի պրեզիդենտի: Մյունխենում Մենք հանդիպում ունեցանք Բավարիո վարչապետի տեղակալի, իսկ Ֆրանկֆուրտում՝ արդարադատության մինիստրի հետ, բարեկամական զրույց ունենալով նրանց հետ:

Պետք է ասենք, թե նաև պետական անձնավորությանց հետ Մեր խոսակցությանց նյութ էր դառնում նաև աշխարհի խաղաղության հարցը: Եվ ամեն անգամ մենք հաստատում էինք բոլորի իղձը, որ պետությունները համերաշխությամբ լուծեն քաղաքական հարցերը: Այս տեսակետից Մենք վերադառնում ենք մխիթարված սրտով և համոզումով, թե այսպես էլ կլինի և հետ այսու մարդկությանը կխնայվի համաշխարհային նոր արհավիրքներ, նոր կործանումներ:

Ուրեմն՝ Մեր ամենօրյա աղոթքը կմնա առ Աստված. «Տուր աշխարհիս խաղաղութիւն, ազգիս Հայոց սեր միութիւն»:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐՈՂ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻՎ

Քարոզի վերջում, Վեհափառ Հայրապետը Հոգեգալստյան հոգևոր ներշնչումի

խորհուրդը գեղեցկորեն կապում է 40 օրեր առաջ Ֆրեզնո քաղաքում մահացած տագնապավոր և հայատրոփ զգացումներով ապրած Վիլյամ Սարոյանի կյանքի ու նրա գրական ողջ ժառանգության հետ՝ շեշտելով, որ «այսօր ուզում ենք ոգեկոչել հիշատակը մեր ազգի մեծագույն զավակներից մեկի՝ Վիլյամ Սարոյանի, որը նույնպես Սուրբ Հոգուց ներշնչված, ստեղծագործ զավակներից մեկն էր մեր ազգի: Նա Ամերիկա է ծնվել, նրա գրականությունը գրվել է անգլերեն լեզվով, բայց նրա հոգին հայկական է եղել և հայ ժողովրդի ոգեկանությունն է արտահայտել»:

Վեհափառ Հայրապետի քարոզից հետո Նրա նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ:

Օրվա եկեղեցական հանդիսություններից հետո Հայոց Հայրապետը առաջնորդվում է Վեհարան:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Հայոց Հայրապետի Մայր Աթոռ վերադարձի ուրախ առիթով:

Ընդունելությանը ներկա են լինում Տ. Սիոն, Տ. Հուսիկ, Տ. Արսեն սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը, Տ. Աղան ծայրագույն վարդապետը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները և մայրավանքի ղեկավար աշխատողներ և այլ հյուրեր:

Ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հայոց Հայրապետի վերադարձը Մայր Աթոռ սրտառուչ ու ջերմ խոսքերով ողջունում են տիար Ռուբեն Պարսամյանն ու Տ. Սիոն արքեպիսկոպոսը:

Վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն է հայտնում հանուն սեղանակիցների ասված բարիգալստյան խոսքերի համար:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ավարտվում է պաշտոնական սույն ճաշկերույթը: